ЗДѢСЬ ПОКОИТСЯ ПРАХЪ/ ЕЛИЗАВЕТЫ ИВАНОВНЫ/ ТЕВАНОВЬ,/ СКОНЧАЛАСЬ 3 ФЕВР 18...

*746. Կոթող, սև գրանիտից: Վրան՝ 6 տող.*

ЗДѢСЬ ПОКОИТСЯ ПРАХЪ/ МАРІИ ИВАНОВНЫ/ СТЕПАНОВНОЙ,/ УРОЖД. ЧЕРКЕСЪ./ РОД. 3 іюля 1839, СКОНЧ. 24 АПР. 1909г.

## ԳՐԻԳՈՐԻՈՊՈԼ

*Գրիգորիոպոլը իբրև հայաքաղաք պաշտոնապես հռչակվել է Եկատերինա Բ կայսրուհու 1792 թ. հուլիսի 25-ին հրովարտակով, սակայն հայ ազգաբնակչությունն այստեղ բնակություն է հաստատել ավելի վաղ ժամանակներից (տե՛ս արձ. N 767 և այլն): Մ. Բժշկյանի վկայությամբ Դուբասարի մոտ հիմնադրված «Գրիգորիպոլ է քաղաք Հայոց և ի մեծ մասն բնակչաց են հայք, եկեալ յԻսմայիլէ, ի Քիլիոյ, ի Ղաւշանէ և Ռաշքովայ և կէս մի յաւելեալ են անգ Ռուսաց և Մոլտովանից»[26]: Սկզբնապես այստեղ ապրել են 900 հայ ընտանիք, 4444 մարդ[27], (1790 թ.) օժտված են եղել ինքնավարությամբ. ունեցել են իրենց դատարանը՝ հինգ դատավորներով: 1799թ. ռուսական Պավել կայսրը Գրիգորիոպոլցի հայերին շնորհում է մի շարք արտոնություններ և 30000 դեսյատին հող: Ապա գաղութն աստիճանաբար քայքայվում է: 1820-ական թթ. այստեղ բնակվում էին 350 հայ ընտանիք, որոնք ունեցել են 4 եկեղեցի՝ ս. Կատերինա, ս. Լուսավորիչ, ս. Խաչ և ս. Պողոս-Պետրոս[28]:*

*Գրիգորիոպոլում գործել է հայ օրիորդաց դպրոցը[29], դպրատունը: Հայկական պատմական հուշարձաններից այժմ պահպանվել են արտաքուստ և ներքուստ ձևափոխված եկեղեցիներից մեկը՝ ս. Աստվածածինը (Մարքսի փողոցի վրա) և գերեզմանատներ, որոնք կոչվում են Իզմայիլյան, Ղավշանյան և Քիլիական: Շրջագայության ժամանակ մեզ մեծապես օժանդակեց բնիկ գրիգորիոպոլցի հայուհի Ալեքսանդրա Գեորգևնա Խորասանյանը (ըստ ամուսնու ազգանվան՝ Գոլուբինսկայա), որին հայտնում ենք մեր սրտագին շնորհակալությունը:*

### Ա. ԻԶՄԱՅԻԼՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ

*747. Տապանաքար, սպիտակ մարմարից, քանդակված նախշերով, ստորին մասում՝ երեք խորաններ և ծաղկամաններ: Աջ մասը կոտրված է: Վրան՝ 17 տող.*

---

26 Մ. Բժշկյան, էջ 185:

27 Ж. Ананян, Рецензия на книгу В. М. Кобузана "Заселение Новороссии в XVIII- перв. полов.XIX в.", М. 1976. См. ИФЖ, 1979,N 4, с. 243-246.

28 Ж. Ананян, Страничка из истории армянского женского образования в России. "Вестник общ. наук АН Арм. ССР", 1972, N 5, с. 59-65.Ճարտարապետական հուշարձանների նկարագիրը տե՛ս Ա. Թորամանյան, նշվ. աշխ., էջ 40:

29 Այս դպրոցի մասին հոդված է գրել գրող Մարիետա Շահինյանի պապը՝ Դավիթ ավ. քահանա Շահինյանը (տե՛ս «Օրիորդաց հոգևոր դպրոց ի Գրիգորիոպոլ», «Արարատ», 1871, էջ 397-398):



ՏԱՊԱՆ ՀՌՉԱԿԱՒՈՐ ԱՌՆ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՈՐԴԻՈՅ/ ՏԷՐ ԻՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱՅԻ ԵՒ ԵՂԲՕՐ ԻՍԱՀԱԿԱՅ ՄԵԾ/ ԱՆՈՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՋՄԻՒՌՆԻՈՅ. ՍԱ ՍԵՐԵԱԼ/ Ի ՋԱՐՄԷ ԳԱՂԱՄԱՅ ԵՒ ԴԱՒԹԱՅ ՊԵԿԷ ՄԵԾԻ. ԾՆԵԱԼ/ ԻՇԽԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆՒՈՅ ԵՒ ԲՆԱԿԵԱԼ ՅԵՐԵՒԱՆ ՔԱՂԱՔԻ, / ԱՊԱ Ի 1784 ԹՈՒՈՅ ՓՐԿՉԻՆ ԿԱՐԳԵԱԼ ԴԵՍ-ՊԱՆ / ԱՐԱՐԱՏԵԱՆ ՀԱՅՈՑ Ի ԴՐԱՆ ԻՒՐՈՒՀԻՈՅ ԿԱՅՍԷ/ՌԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵ⌊ԱՆ⌋ ԵԿԱՏԱՐԻՆԷԻ ԵՐԿՐՈՐԴԻ ⌈ՎԵՐԱ⌉ՊԱՏՈՒԵՑԱՒ ՀԱԶԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ⌊ԱՒ⌋/ ՊՕՏՊՈԼԴՈՎՆԻԿՈՒ ԵՒ ՅՈՒՍԿ ՅԵՏՈՅ ԺՈՂՈ... Ի ՊԵՍԱՐԱԲԻՈՅ ԶԲԱԶՄՈՒԹԻՒՆ ԱԶ-

ԳԻՆ ՀԱ[ՅՈՑ] Ի ԳՐԻԳՈՐԻՊՕԼ ԿԱՐԳԵՑԱՒ ՆԱԽԱԹՈՌ [ԴԱ]ՏԱՒՈՐ ՀԱՅՈՑ ՀՐՈ-ՎԱՐՏԱԿԱՒ ԿԱՅՍ[ԵՐԱԿԱՆ] Ի ՀԱՍԱԿԻ ՎԱԹՍՈՒՆ ԵՒ ՀԻՆԳ ԱՄԱՑ/ ԿԱԼԵԱԼ ՋՎԱԽՃԱՆ ԿԵՆԱՑ ԱՍՏԷՆ...[ԱՄ]ՓՈՓԻ Ի 1800 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ[30]:

748. Տապանաքար, *սպիտակ մարմարից, վրան՝ 9 տող ռոնավոր.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆԴԻՐ ՀԱՆ/ԳԸՍՏԻ
ԱՌԱՔԵԼ ԱՆՈՒՆ ՊԱՏԱՆԵԿԻ.
ՀԱՅՐ/ ՍՈՐԻՆ ԿՈՋԻ ԵՍԱՅԻ,/
ՈՐ ԵՒ ԳԵՂՋԷՆ ԵՂՎ[Ա]ՐԴԻ/.
ՈՐՊԷՍ ԾԱՂԻԿ ՀԱՐԵ/ ԿԱՐԿՏԻ
ԵՒ ԹԱՌԱՄԵ/ԱԼ Ի ՊԱՐՏԵԶԻ.
ԺԲ ԱՄ/ ԵԱՑ ՍԱ ՎԱԽՃԱՆԻ,
ԵԹ/ՈՂ ԿՍԿԻԾ ԻՒՐ ԾՆՈՂԻ/.
ԹՎԻՆ ՌՃԿԲ ԻՆ (1713):

Հրատ. *Из истории, 51*

749.Կոթող, *սպիտակ մարմարից, գրակալի ձևով, վրան՝ բացված գիրք, որի էջերին՝ 11 տող.*

ԱՄԵՆ ԱՄԵՆ / ԱՍԵՄ ՁԵԶ, ՁԻ/ՎԱՅ ԺԱՄԱՆԱԿ/ ԵՒ ԱՐԴԷՆ ԻՍԿ Է /ՅՈՐԺԱՄ ՄԵՌ/ԵԱԼՔ ԼՍԻՑԵՆ/ ՁԱՅՆ/ ՈՐԴԻՈՅՆ/ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՈՐՔ/ ԼՍԻՑԵՆ/ ԿԵՑՑԵՆ:

750. Պատվանդանին՝ *հայերեն 5, ռուսերեն 7 տող.*

ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ/ ՍԱՐԳՍԻ ԱՌԱՔԵԼԵԱՆ/ ՏԵՄԻՐԹԱՇԵԱՆՑ/. ԾՆԵԱԼ Ի 10 ՓԵՏ. 1851 ԱՄԻ/. ՎԽՃԱՆԵԱԼ Ի 20 ՄԱՐՏԻ 1901 ԱՄԻ:

ЗДѢСЬ ПОКОИТСЯ ПРАХЪ / САРКИСА АРАКЕЛОВИЧА/ ДЕМИРТАШЕВА./ РОДИЛСЯ 10 ФЕВРАЛЯ 1851 ГОДА/, УМЕРЪ 20 МАРТА 1901Г./ МИРЪ ПРАХУ [ТВОЕМУ] НЕЗАБВЕННОМУ ДОРОГОМУ МУЖУ И ОТЦА.

Հրատ.*Из истории, 55*

---

30 «Արարատեան դեսպան» Ստեփան Տեր-Սահակյանը Պետերբուրգ էր մեկնել Երևանի բնակիչների հանձնարարականով: Հանդիպումներ է ունեցել Եկատերինա Բ կայսրուհու, իշխաններ Գ. Պոտյոմկինի և Պ. Պոտյոմկինի հետ: Րաֆֆին կարծում է, թե այս պատվիրակը Ռուսաստան է ուղարկվել «Ղարաբաղի մելիքների կողմից» (տե՛ս Րաֆֆի, Խամսայի մելիքությունները, Երկ. ժող., 10, Երևան, 1964, էջ 227): Ստեփան Տեր-Սահակյանի դեսպանության մասին մանրամասն տե՛ս А. Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80_х годах. XVIII столетия, Ереван, 1947, с 119_120. Վ.Ռ. Գրիգորյան, Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում (1780-1800), Երևան, 1958, էջ 106-111:

751. Տապանաքար, *սպիտակ մարմարից, քանդակազարդ, կենտրոնում փորագրված շրջանաձև օղակի մեջ՝ 6 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆ/ԳՍՏԵԱՆ ՇՈՒՐՈՂ/ՑԻ ՈՍԷՊԻ ՈՐԴԻ/ ՊԱՐԻ (՞) ԵՒ ԵՈՒՐ ԿՈ/ՂԱԿԻՑ ԽԱԼԻ, ՈՐ/ ՓՈԽԵՑԱՒ ԹՎԻՆ/ ՌՄԼ (1781):

Ծանոթ. *Կասկածելի է ՊԱՐԻ անվան վերծանությունը:*

Հրատ.*Из истории,52*

752.Տապանաքար, *սպիտակ մարմարից, երկթեք, գլխավերևում՝ փոսիկ: Եզրալանջերին՝ 5 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍ/ՏԵԱՆ ՍԱՖԱՐԻ ՈՐԴԻ/ ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐԻՆ, ՈՐ/ ՀԱՆԳԵԱՒ ԹՎԻՆ ՌՃՀ (1721)ԻՆ ՈՒԼԻՍԻ Ժ (10):

Հրատ.*Из истории,52*

753. *Տապանաքար, կրաքարից, վրան՝ խաչ և 6 տող.*

ЗДЕСЬ ПОКОИТСЯ/ ПРАХЪ ИВАНА ИВ/АНОВИЧА МИРАКОВА, РОДИВШАГОСЯ 18... 14 ФЕВРАЛЯ /СКОНЧ. 1891 ГОДУ 30 МАРТА/ ОТЪ РОДУ 77 ЛѢТЪ.

Ծանոթ. *Ծննդյան թվականի տասնավորն ու միավորը եղծված են:*

754. *Տապանաքար, նախորդի կողքին, նույնատիպ: Վրան՝ 6 տող.,*

ЗДѢСЬ ПОКОИТСЯ /ПРАХЪ КАРАПЕТА ИВАНОВИЧА/ МИРАКОВА/. РОДИВШАГОСЯ 1827Г./ СКОНЧАВШАГОСЯ 5 АПР/ѢЛЯ 1888 ГОДА.

*755. Տապանաքար, գեղաքանդակ, միջին հատվածում՝ 7 տող.*



ՈՒՆԻՄ ԱՌ ԻՍ Ի ՊԱՀԵՍՏԻ
ՋԵՂԻՍԱԲԷԹ ԽՐԻՍՏԱՓՈՐՆԻ՝
ՋԱՋՆՈՒՈՒՀԻ ԿԻՆ ՅՕՀԱՆՆԷՍ ՍԱԹՈՎԻ
ՅԱՆՋՆԵԼ ԱՄԲՈՂՋ ՋԻԻՐ ԿՈՋՈՂԻ
ԽՆԴՐԷ Ի ՋԵՆՋ ՄԻՇՏ ՋՈՂՈՐՄԻ՝
ՊԱՏԱՀՈՂԱՑԴ ԱՅՍ ՏԱՊԱՆԻ
1816, ՄԱՐՏԻ 5: E.X.

*Ծանոթ. E.X. հապավումը նշանակում է Ելիզավետա Խրիստաֆորովնա:*

*756. Տապանաքար, սպիտակ մարմարից, գեղաքանդակ նախշերով: Վրան՝ հայերեն 6 և ռուսերեն՝ 7 տող.*

ա) ՊՈԼՈԵՑՔ ՀԱՅՍ ԱՋՆՈՒԱԿԱՆ/
ԵՐԵՄԻԱ ՍՏԵՓԱՆԵԱՆ
ՕՏԱՐՈՒ/Թ/Ե[ԱՆ] ԱՅՍՄ ՎԱՅՐԻ
ՀՐԱԻԷՐ ՄԱՀՈՒ ՋԻԻՐ/ԸՆ ՀԱՍԱՆԻ
Ք[Ա]ՂՑՐԱԲ[Ա]ՐՈՅ ԱՅՍ ՍԻՐԵԼԻ
ՀԱՅՑԷ Ի ՋԵՆՋ/ ՏՐ ՈՂՈՐՄԻ:

*757. Ապա՝ ռուսերեն.*

բ) ЗДГЪСЬ ПОГРЕБЕНО ТГЪЛО ТИТУЛЯРНАГО СОВГЪТН/ИКА ЕРЕМГЪЯ СТЕПАНОВА СЫНА ЕЛИЗАРОВА/ СЛГЪДОВАВШЕГО ПО ДОЛГУ КОРОННОЙ СЛУЖБЫ / ИЗЪ ОТОМАНСКОЙ ПОРТЫ ВЪ СТОЛИЦУ/ И ПРЕДСТАВИВШАГОСЯ М[ЕСЯ]ЦА МАРТА/ В 5 ДЕНЬ 1815 ГОДА ОТЪ РОЖДЕНІЯ СВОЕ/ГО НА 42$^{М}$ ГОДУ.

Լուսանկ *187*
Հրատ.*Из истории 153*

*758. Կոթող. գորշ գրանիտից, ճղակոտոր ծառի տեսքով. հարթեցրած մասին՝ 3 տող.*

ԱՅՍ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ /ՍԱՐԳՍԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ/ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ:

*Ապա՝ ռուսերեն.*

СЕРГЕЙ ГРИГОРЬЕВИЧ/ ОВАНЕСОВЪ/ РОД.1859Г.+СКОНЧ. 14 СЕНТ. 1901Г.

*759. Տապանաքար, դագաղաձև, երկրաչափական զարդերով: Վրան՝ 5 տող.*

ЗДЕСЬ ПОКОИТСЯ ПРАХЪ КЕВОРКА/ КАРПОВИЧА/ ПОПОВА/. РОД. 1838Г./ СКОНЧ. ВЪ 1914 ГОДУ.

*760. Տապանաքար, սպիտակ մարմարից, քանդակազարդ, միջին մասում՝ ձվաձև շրջանագիծ, որի ներսում՝ 10 տող.*




ՅԱԿԻՆԹ ՊԱՅԾԱՌ ՅՈՍԿԻԱՓԱՅԼԻ
ՕՐՀՆԵԱԼ ՍԱԹՈՎ ՈՐԴՈՎՔ ՀՐՃՈՒԻ.
ՀԱՅՐ ԾԵՐՈՒՆԻ ՈՒԹՍՈՒՆ ԱՄԻ
ԱԶԳԱՏՈՀՄԻՒՔ Է ԳՈՎԵԼԻ
ՆԱԽՆԵՕՔ ԱԶՆԻՒ ԻՆՔՆ ԱՅՐ ԲԱՐԻ
ՆԸՆՋԷ ԱՅԺՄԻԿ ՅԱՅՍՄ ՇԻՐՄԻ.
Է ՀԱՅ ՋՈՒԱԾ. ԻՒՐ ԱՍՏ ԴԻՊՈՂԻ
ՍԼՐՏԻ ՄՏՕՔ ՏԱԼ ՋՈՂՈՐՄԻ.
ԹՎԻՆ 1819 ԻՆ ԱՊՐԻԼԻ 28 ԻՆ.
Х. С.

*Ծանոթ. Վերջին հապավումը նշանակում է Խրիստափոր Սաթով:*

*Հրատ.* *Из истории,* 54

761. Տապանաքար, սպիտակ մարմարից, միջին մասի շրջանաձև օղակի մեջ՝ 9 տող.




ЗДѢСЬ/ ПОХОРОНЕНЪ/ КОЛЛѢЖСКІЙ/ АССЕСОРЪ/ [И КАВАЛЕРЪ]/ БОГДАНЪ/ ИВАНОВИЧЪ/ САТОВЪ/. СК. 1848 ГОДА/ ІЮЛЯ 10/ ДНЯ.

Ծանոթ. «И КАВАЛЕРЪ» արտահայտությունը գրչագրում բաց է թողնված:

Լուսանկ. *188*

## Բ. ՂԱՎՇԱՆՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ

Գտնվում է Գրիգորիոպոլից 4 կմ հեռավորությամբ դեպի հարավ-արևելք, Գելակեու վայրում, Կրասնոգորսկ գյուղի մոտ: Պահպանության վիճակն անմխիթար է. շինարարական աշխատանքների ժամանակ օգտագործվում են տապանաքարերը: Առաջիկա տարիներին թերևս ամբողջապես ոչնչանա, որովհետև բնակարաններն արդեն կառուցում են գերեզմանոցի տարածքում: Այստեղից հավաքվել են հետևյալ արձանագրությունները.

762. Տապանաքար, սպիտակ մարմարից, քանդակազարդ նախշերով, վերնամասում՝ պայտաձև խորան, ուր փորագրված է 8 տողանոց արձանագրություն: Ստորև պատկերված է կշեռք՝ զույգ նժարներով, որոնց կողքերից վեր են խոյանում երկու նոճի ծառեր:



ՈՎ ՀԱՆԴԻՊՈՂ ԱՅՍ ՇԻ-ՐԻՄՆ,

ՀԱ/ՐՔ ԵՒ ԵՂԲԱՅ[Ր]Ք ԻՄ ՍԻ-ՐԵԼԻՔ/,

ԻՆՋ ԱԱՑԷՔ՝ Ա̅Ծ̅ ՈՂՈՐՄԻ/.

ՈՐ ԷՄ ԹԱՔԱՅՄԱՐՔՑԻ ՀԱ-ՐԱ/ՅՊԵՏԻ ՈՐԴԻ ՍԱՐԳԻ-ՍԻՆ,/

ՈՐ ՀԱՆԳԵԱՒ Ի ՔՍ ԹՎԻՆ/ ՌՃՀԵ(1726)ԻՆ ԵՒ ԴՈՒՔ ՅԻՇԵԱԼ/ ԼԻՋԻՔ ԱՄ՝...

Լուսանկ. *189.*

*763.* Տապանաքար. *գորշավուն կրաքարից. վրան՝ 4 տող.*

ЗДЕСЬ ПОКОИТСЯ ПРАХЪ/ МАРИАМЪ ГОЛОЛАКОВА/. СКОНЧАЛАСЬ 1905 Г./ ОТЪ РОДУ 72 ГОДА.

*764.*Տապանաքար, *գագաղաձև, նույն կրաքարից: Վրան՝ 4 տող.*

ЗДЕСЬ ПОКОИТСЯ ПРАХЪ РАБЫ БОЖIИ/ ОСКИНАР АНДИРТА/СОВНА ПОПОВОЙ/ СКОНЧАЛАСЬ 1873Г. 20 МАРТА.

**Բայդուկովի փողոցի վրա,**

***Տեռնովսկիների բնակարանի պատի տակ, աստիճանների մոտ.***

*765.* Տապանաքար, *սպիտակ մարմարից, քանդակազարդ: Վրան 6 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԴՍ/ՏԵԱՆ ՆՈՐԱՅ-ԿԵԴՑԻ ԿՈՒ...Բ ՈՐԴԻ ՄԱԹՈՍԻՆ(՞),/ ՈՐ ՀԱՆԳԵԱՒ Ի ՄԱՀՈՒԱՆԷ/ Ի ԿԵԱՆՍ ԹՎԻՆ ՌԲՃԺԴ ԻՆ (1765)/, ՕԳՈՍՏՈՍԻ ԻԱ (21) ԻՆ:

Գրիգորիոպոլի Մարքսի փողոցի վարսավիրանոց:

*Հայոց եկեղեցու գերեզմանոցը քանդելուց հետո այստեղ են տեղափոխվել մի շարք տապանաքարեր և օգտագործվել իբրև սանդուղքի աստիճաններ, բարեբախտաբար, երեսնիվայր վիճակում: Մեզ հաջողվեց քանդել տալ դրանցից երկուսը և ընթերցել հետևյալ հիշատակագրությունները.*

766. Տապանաքար, *սպիտակ մարմարից, քանդակազարդ: Վրան՝ 10 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՐԵԻԵ/ԼՑԻ ԵՒ Ի ԳԵՂՋԷՆ /Թ⌊Ա⌋ՔԱ/ՄԱՐԳՑԻ ՀԱՅՐԱ-ՊԵ/ՏԻ ՈՐԴԻ ՆԱԶԱՐԻՆ, ՈՐ/ ՓՈԽԵ-ՑԱՒ ԱՌ ԱԾ ԹՎԻՆ/ ՌՃՀԷ ԻՆ(1728), ՅՈՒԼԻՍԻ Ժ (10)ԻՆ/, Ո ՈՔ ՀԱՆԴԻՊԻ Մ⌊Է⌋Կ/ ՀԱՅՐ ՄԵՂԱՑԻՒ ՅԻ/ ՇԷ. ԵՒ ԻՆՔՆ ՀԻՇԱԼ/ ԼԻՋԻ Ի ՔՍԷ. ԱՄԷՆ:

Լուսանկ.*190*

767. Տապանաքար. *սպիտակ մարմարից, քանդակազարդ, ներքևի մասում՝ նռճիներ, ծաղկեփունջ՝ ծաղկամանով: 14 տողանոց հանդավոր արձանագրությունից վեր՝ կենտրոնում սրածայր խորան.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԳԵՐԵԶՄԱՆԻ
ՄԷԿ ՊԷՄՈՒՐԱՏ ԽԵՂՃ ԱՍԼԱՆԻ,
ՈՐ ԷՐ ՏԵՂԵԱՒ ԱՐԵՒԵԼՑԻ
ԵՒ Ի ԳԵՂՋԷՆ ԹԱՐՔԱՄԱՐՔՑԻ.
ԵՒ ԷՐ ՈՐԴԻ ՍԱ ՆԱԶԱՐԻ,
ՓԱՅԼԼԷՐ ԵՐԿՐԻ ՆՄԱՆ ՎԱՐԴԻ
ԱՅՍՕՐ ԻՋԵԱԼ Ի ՀՈՂ ՇԻՐՄԻ,
ՈՏԻՑ ՄԱՐԴԿԱՆ ԿՈԽԱՆ ԼԻՆԻ
ՀԱԶԱՐ ՀԱՐՈՒՐ ԵՕԹԱՆԱՍՆԻ
ԵՒ ԵՐԵՔԻՆ ՀԱՅՈՑ ԹՎԻ (1724):
ՈՐՔ ՀԱՆԴԻՊԻՔ ԱՅՍ ՏԱՊԱՆԻ՝
ԱՍԷՔ ՀԱՅՐ ՄԵՐ ՍԲ ԵՂԻՑԻ.
ԵՒ ԷՐ ԱՄՍԵԱՆ ՍԵՄՏԼԵՄԲԵՐԻ,
ԻՍԿ Ի ՅՕՐՆ ՏԱՍ ԵՒ ՉՈՐՍԻ:



Լուսանկ.*191*

*768. Եկեղեցու պատի տակ ընկած սև գրանիտե կոթողի միջին պատվանդանի վրա՝ 6 տող, որի վերջին 3 տողերը եղծված են.*

КНЯЗЬ/ ПАВЕЛЪ АЛЕКСАНДРОВИЧЪ/ АБАМЕЛИКЪ/ РОД.../ СКОНЧ.../ ДОРОГОМУ...

### Արձանագրություններ, որոնք տեղում չկան կամ չենք նկատել

#### Գրիգորիոպոլ

*769. Տապանաքար.*

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ
ԵՒ Ի ՅԵՐԿՐԷՆ ՅԱՐԵՒԵԼԵԱՆ
ԵՐԿԻՐՍ ԿՈՋԻ Ի ՆԱԽՃԱՒԱՆ
ԵՒ ԳԵՂՆ ԿՈՋԻ ԴՈՒՌՈՒՆԻՍ,
ԼՈՒՍԱՀՈԳԻ ՍԱՀԱԿԻ
ՈՐԴԻ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՎԱՐԴԱՆԻ՝
ԳՈՐԾՈՎ ԲԱՐԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ
ԵՒ Ի ԿԵԱՆՍ ԹՎԻՆ ՌՄԺԵ /1766/-ԻՆ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ԻԱ /21/:

*Հրատ. А.Тораманян, Из истории, 49*

*770. Տապանաքար սպիտակ մարմարից, քանդակազարդ՝ եպիսկոպոսական խույր, գավազան, եկեղեցական սպասք:*

ՏԷՐ/. ԱՅՍ ՀՈՂԱՅԻՆ ԵՒ ՎԻՄԱՓ/Ի/ՅԱՐԿՍ ՇԻՐՄԻ
Է ՍՏԵՓԱՆՆՈՍ ԾԵՐՈՒՆԻ ԱՅԼ (*թերևս՝* Ա՞ՅՐ) Վ/Ա/ՐԴ/Ա/Պ/Ե/ՏԻ,
ՈՐ ՄԻԱԲԱՆ ԷՐ ԼՈՒՍ⌊Ա⌋ՋԵՒ ԳԱՀԻՆ ՄԵԾԻ
ՔՍ ԱԿԵՐՏ ՍԲ ԱԹՈՌՈՅՆ ԷՋՄԻ⌊Ա⌋ԾՆԻ,
ՈՐՈՒՄ ԵՒ ԷՐ ԱՇԽԱՏԱՍԷՐ ԵՒ ՊԻՏԱՆԻ
ԱՐՀԻԱՊԱՆԾ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈԼՈՎ ՅԱՐԳԻ
ԲՆԻԿ ՏԵՂԵԱՒ ՃՈՒՂԱԵՑԻ ԵՒ ՄԵԾ ԱԶՔԻ,
ՈՐՈՅ ԱՆՈՒՆ ԲԱՐԱՔԵ⌊Ա⌋ՑԵՆՔ /Ի/ ՎԵՐԱՋԱՅՆԻ,
ՋՈՐ ՂՈՒԿ⌊Ա⌋ՍՈՒ ՍՐԲ⌊Ա⌋ՋԱՆ ՍԲ ՎԵՀԱՊԵՏԻ,
ԷՐ ԱՌԱՔԵԱԼ Ի՛ ՆՈՒԻՐԱԿ ԱՅՍԸՄ ԵՐԿՐԻ,
ՈՐ ԸՍԿՍԵ⌊Ա⌋Լ Ի ԲՈՒՂՏԱՆ⌊Ա⌋Ց ԱՍՏ ՀԱՍԱՆԻ,
ԱՅԼ ՎԻՃԱԿ⌊Ա⌋Ց ԳՈՐԾՆ ՄՆԱՑԵ⌊Ա⌋Լ ԱՌ ՎԱԽՃ⌊Ա⌋ՆԻ
Ի ՄԻ ՀԱԶԱՐ ԵՒ ԵՐՐՈՐԴ ԻՒՐ ՄԵՐ ԷՍ ԹԱՓ /Ի/
ԵՐԵՍՆԵՐԵՔ ԵՒ ԱՒԵԼԻ...ՅՈՒՆՎԱՐԻ
ԱՐԴ ՈՐ ԱՍԷ...ԱԾ ՈՂՈՐՄԻ
ՅՈՐՆ ՎԵՐՋԻՆ Ի ՔՐԻՍՏՈՍԷ ՋՆՈՅՆ ԸՆԿԱԼՑԻ. 1784:

Ծանոթ. *"Լուսաձև գահին" կապակցությունը, կարծում ենք, ստույգ կլինի ընթերցել "Լուսաւորչի գահին"- Գ. Գ.*

*Հրատ. А. Тораманян, Из истории...50*

### Մոլդովայի Կոռնեշտկու շրջանի Տեշկուրենի գյուղ

771.*Տապանաքար՝ վրան 7 տող.*

ՈՒ ԶԻ ԱՅՍՐ Տ/Ա/ՊԱՆԻ ՆՆՋԷ ՕՀԱՆԷՍ/ ՈՐԴԻՆ ԲՕՄԵՇՋԻԿ/ ՄՈՒՐԱՏԵ/Ա/Ն8 Մ/Ա/Հ/-ՏԵՍ/Ի /ԿԱՐԱՊԵՏԻ Յ/Ա/ՐՈՒԹՆ/ԵՆԻ Հ/Ա/Մ/Ա/Կ 8 ԱՄԱՑ/. 1838 ՕԳՈՍՏ/ՈՍ/Ի 15-Ի:

*Ծանոթ. Տրվում է Արշ. Թորամանյանի վերծանությամբ:*

Հրատ. А. Тораманян, Из истории, 118

### Ռիշկանի շրջանի Գորոդիշչե գյուղ

772.*Տապանաքար, վրան 6 տող հայերեն և 8 տող ռուսերեն.*

ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՎԱՐԴԵՆԻԿ/ ՏՐ ԱԻԵՏԻՍԵԱՆ, ԿԻՆՆ ՎԱՃԱՌԱԿԱՆ ԳԵՒՈՐԳԻ/ ՕՀԱ-ՆԵԱՆ, ԾՆԵԱԼ 1793 ԱՄԻ/, ԻՍԿ ՎԱԽՃԱՆԵ/Ա/Լ/Ն/ 3 ՄԱՐՏԻ 1862 ԱՄԻ:

*Նույնը՝ ռուսերեն:*

Հրատ. А. Тораманян, Из истории, 119

### Արձանագրություններ եկեղեցական սպասքի վրա

773. *Սկիհի վրա՝*

ՅԻՇԱՏԱԿ Է ՍԿԻՀՍ ՊԸՍՏԵՑԻ ՅՈՎՀԱՆԻ ՈՐԴԻ ՄԱՀՏԵՍԻ ՍԱՐԳՍԻՆ Ի ԴՈՒՌՆ ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾ ՍԲ ՆՇԱՆԻ. ԹՎԻՆ ՌՃՂԸ (1749):

Հրատ. А. Тораманян, Из истории, 48

774. *Սկիհի վրա՝*

ՅԻՇԱՏԱԿ Է ՍԿԻՀՍ ԻԶՄԱՅԵԼՑՈՅ ԹԵՐՁԻ ԱԽՊՐՏՈՑՆ. ՁԵՌԱՄԲ ՄԱՀՏԵՍԻ ՅԱԿՈ-ԲԻՆ. Ի ԴՈՒՌՆ ՍԲ ԱԾԱԾՆԱՑ ԵԿԵՂԵՑՈՒՆ. ԹՎԻՆ ՌՃՂԹ (1750):

Հրատ. А. Тораманян, Из истории, 49

775. *Խույրի վրա՝*

ՅԻՇԱՏԱԿ Է ԹԱՔՍ ԹՈԽԱԹՑԻ ՄԱՀՏԵՍԻ ԱԾԱՏՈՒՐԻ ՈՐԴԻ ՖԵՐՀԱՏԻՆ ԵՒ ԻՒՐ ԾՆՈՂԱՑՆ. ԻՍՄԱՅԷԼ, Ի ԴՈՒՌՆ ՍԲ ԱԾԱԾՆԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ. ԹՎ. ՌՄ (1751):

Հրատ. А. Тораманян, Из истории, 49

776. *Սկիհի վրա՝*

ՅԻՇԱՏԱԿ Է ՍԿԻՍ ՔԻԼԻՈՒ Ի ԴՈՒՌՆ ՍԲ ԱԾԱԾՆԱՑ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՏԻՐ/ԱՑՈՒՆԵ-ՐՈՒՆ. ՁԵՌԱՄԲ ԳԱՆՁԱԲԵՏ ՏԻՐԱՑՈՒ ԽԱՉԱՏՈՒՐԻՆ. ՇԻՆԵՑԱՒ ԹՎԻ ՌՄԺ (1761):

Հրատ. А. Тораманян, Из истории, 49